ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 228-Ա «15» հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի Հ.466-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԷՐԵԲՈՒՆԻ ՓՈՂՈՑԻ Հ.2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի տնօրեն Էդուարդ Մադաթյանի դիմումը՝ Էրեբունի վարչական շրջանի, Էրեբունի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող, ընկերությանը սեականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2827289 վկայական) 2.3152հա մակերեսով հողամասից, ենթակայան կառուցելու նպատակով 0.007708հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն քննարկվող 0.007708հա մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գոտում, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.466-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի Էրեբունի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող, «Մուշ-Մէդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2.3152հա մակերեսով հողամասից 0.007708հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրվել է «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.466-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2025 թվականի հոկտեմբերի 13-ի հ.Դ-102214-25 եզրակացությունը.

1. Էրեբունի վարչական շրջանի, Էրեբունու փողոցի հ.2/1 հասցեում գտնվող, «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 2.3152հա մակերեսով հողամասից 0.007708հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.466-Ա որոշման համապատասխան սահմանել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էներգետիկայի:

2.Հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:

3.Ընդունել ի գիտություն, որ քննարկվող տարածքում առկա են «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող ենթակառուցվածքներ և «Ջիէնսի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող կապի վերգետնյա և ստորգետնյա մալուխներ՝ ինչի պարագայում քննարկվող տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ, ենթակառուցվածքների և մալուխների վնասումը բացառելու նպատակով անհրաժեշտ է համագործակցել ընկերությունների հետ:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ